

2015թ. չորրորդ եռամսյակի խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ
ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 526 հարկ վճարողների ամփոփ
ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված
են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2015թ.-ի ընթացքում
սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների
համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 526 հարկ վճարողների 2015
և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2015թ. չորրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա
կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 1,019.ր մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն
եռամսյակի համեմատությամբ նվազել է 5.3 %-ով:
2. Ներմուծման ծավալները կազմել են 230.8 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 135 մլրդ դրամ նախորդ տարվա նույն
եռամսյակի 139,2 մլրդ դրամի փոխարեն:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2015թ.-ի չորրորդ
եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 42.8 մլրդ.
դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի
առումով 2015թ.-ի չորրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից
վճարվել է շուրջ 104 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների
կողմից 2015թ.-ի չորրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում
հավաքագրված հարկային եկամուտների մոտ 50%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 189 հարկային ստուգումներ, այդ
թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից
վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության
85 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ
վճարման ենթակա գումարներ 4.2 մլրդ. դրամի չափով:
7. 01.01.2016թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 140 մլրդ
դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 94.2 մլրդ
դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 16.3 մլրդ դրամ: Նշված
ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 14.1 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 3.1 մլրդ դրամի չափով:

8. Մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 4.7%-ով և կազմել է 232 հազար դրամ: